



**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**  
**ՄԱՅԻՍՅԱՆԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ**  
**2016-2020 ԹԹ.**  
**ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ**  
**ԾՐԱԳԻՐ**

# ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Արմավիրի մարզի Մայիսյանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

---

15.01.2003 թվականին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետեգիստրի Արմավիրի տարածքային բաժնում:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է Արմավիրի մարզպետի կողմից 18.11. 2017 թ. N 393 հրամանով:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի 22.12-ի N 1727 Ա/Ք հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

- Տարրական ընդհանուր-սահմանային տեղով 100
- Հիմնական ընդհանուր- սահմանային տեղով 125
- միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթական գործունեություն- սահմանային տեղով 85

Դպրոցը տիպային շենք է

Սահմանային հզորությունը-աշակերտ-տեղ 310

Դպրոցում առկա են- դասասենյակ-առարկայական կաբինետ, գրադարան, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, նախադպրոցական կրթության կենտրոն:

2016-17 ուստարում դպրոցում աշխատում են 26 մանկավարժներ, որոնցից 1-ը համատեղությամբ:

2 վարչական, 9 սպասարկող անձնակազմի աշխատողներ: Դպրոցն ունի ընդամենը 37 աշխատակից:

2016-17 ուստարում աշակերտների ընդհանուր թիվը կազմում 177

2016-17 ուստարում մեկ ուսուցչին ընկնող աշակերտների թիվը կազմում է 7 աշակերտ:

## ԴՊՐՈՑԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր ոլորտներում փոփոխություններն աննախադեպ արագ ու դինամիկ են ընթանում: Նման փոփոխությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ գիտության ու տեխնիկայի ընձեռած նոր հնարավորությունները արագորեն ներթափանցում են հասարակական հարաբերությունների, կյանքի կազմակերպման, աշխատանքի, գիտելիքների ձևավորման ու փոխանցման ոլորտ:

Շարունակաբար նորացվող, զարգացող ու փոփոխվող գիտելիքը և դրա ստեղծման համար անհրաժեշտ նորարարությունն ու ստեղծագործականությունը դառնում են մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ՝ թե՛ անհատական, թե՛ ներպետական և թե՛ համաշխարհային մակարդակներում: Գիտելիքն այսօր այլևս լոկալ բնույթ չի կրում. Ցանցերի ու հեռահաղորդակցման դարաշրջանում աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում:

Նման պայմաններում առավել արդյունավետ ու հաջողակ են այն անհատները, խմբերն ու պետությունները, որոնք կարողանում են կիրառել նորագույն գործիքների ավելի մեծ տեսականի և բաց են շարունակ տեղի ունեցող փոփոխությունների առջև, բայց չեն կորցնում իրենց ինքնությունը: Նրանք տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) միջոցով ցանցավորված են միմյանց և աշխարհի հետ, կարողանում են աշխատել թիմերով, ստեղծագործաբար են մոտենում կյանքի առաջադրած խնդիրներին և պատրաստ են շարունակաբար սովորել: Այս ամենին հասնելու հիմնական ճանապարհը դպրոցական կրթությունն է, որի ձևերն ու բովանդակությունը, ինչպես նաև կրթական միջավայրը փոխվում են՝ արձագանքելով գիտելիքի փոխանցման և տարածման արագընթաց տեմպերին ու պահանջներին:

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգերծությունն են ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրվով տարատեսակ խնդիրներ:

Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրման, կիրառման հետևանքով ազգային և

համաշխարհային տնտեսություններն անընդհատ վերակառուցվում են: Արդյունաբերական տնտեսությունը վերաճում է գիտելիքների տնտեսության, իսկ հասարակությունը դառնում է տեղեկատվական: Անընդհատ փոփոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի են կազմավորվում և վերաբաշխվում աշխատատեղերը: Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու և տեղաշարժվելու կարողությունը:

Հանրակրթության դերն աճում է: Միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության և արժեքային որակներ:

Հանրակրթության համակարգում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով:

Հանրակրթության էական բարեփոխումը և առաջանցիկ զարգացումը դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի: Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

Անցած 25 տարիների ընթացքում համայնքում չի գործել մանկապարտեզ, որն իր բացասական կնիքն է դրել նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և դաստիարակության վրա: 2011 թվականը դարձավ շրջադարձային. «Փրկենք երեխաներին» միջազգային կազմակերպությունը դպրոցի տնօրինության, համայնքի ֆինանսական ներդնման շնորհիվ դպրոցում բացվեց նախադպրոցական կրթության կենտրոն, ուր հաճախում են համայնքի երկու խումբ / 45 երեխա/ նախադպրոցական տարիքի երեխաներ: Կենտրոնն ապահովված է անհրաժեշտ բոլոր տեխնիկական միջոցներով և կրթական ծրագրերով:

# ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԿՈՒԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Դպրոցում հարկավոր է հաստատել հանրակրթության կազմակերպման հետևյալ սկզբունքները՝

1. Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգայինի հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ:
2. Հանրակրթությունը նպաստելու է մարդու և քաղաքացու շահերին, ծառայելու անհատին ու ժողովրդին:
3. Հանրակրթությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով: Այն նպատակաուղղված է հայոց լեզվի, հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը, ազգային ինքնության և միասնության ապահովմանը:
4. Հանրակրթությունն իրականացվում է ուսուցման և դաստիարակության միասնականության սկզբունքով՝ պահպանելով իր աշխարհիկ բնույթը, զերծ մնալով խտրականություններից ու սահմանափակումներից: Այն հավասարապես մատչելի է յուրաքանչյուրին՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթներից:
5. Հիմնական կրթությունը պարտադիր և հասանելի է յուրաքանչյուր անձին, անկախ նրա հետաքրքրություններից, նախնական մասնագիտական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից:
6. Հանրակրթությունն իրականացվում է սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

# Սովորողների կարողությունների և հմտությունների զարգացումը

Սովորողին հնարավորություն է ընձեռվում գործնականում կիրառել ստացած գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Այդ նպատակով անհրաժեշտ է:

## *1. Սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ, այդ թվում՝*

- զգայության, ընկալման և մտապատկերման միջոցով,
- վերլուծել քննարկման, մեկնաբանման, տարանջատման, համեմատության, խմբավորման միջոցով,
- մտահանգումներ անել ամբողջացման, հակակդրման, բնութագրման, հիմնավորման, ամփոփման և կշռադատման միջոցով,
- ընդհանրացնել և համադրել վերացարկման, գնահատման, արժևորման, փաստարկման, ապացուցման, կանխատեսման, ծրագրման միջոցով,
- հիմնախնդիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրել դրանց լուծման հնարավոր եղանակները և գտնել լուծումներ,
- երևութների նկատմամբ դրսևորել առողջ հետաքրքրություն և քննադատական մոտեցում,
- վերլուծել իրավիճակը և կատարել եզրակացություններ,
- ընդունել ինքնուրույն որոշումներ և հիմնավորել:

## **2. Հաղորդակցական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակն է.**

- Ուսումնառության ընթացքում յուրաքանչյուր սովորող պետք է կարողանա՝
- լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,
  - բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,

-ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները /եզրերը/, հասկացությունները, արտահայտությունները,

-հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները,

-օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից և այլն:

### **3. Համագործակցային կարողությունների և հմտությունների զարգացման նպատակն է.**

ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող պետք է կարողանա՝

-աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել և դրանց համար պատասխանատվություն կրել,

-սովորել և սովորեցնել

-դրական հարաբերություններ հաստատել, դրսևորել առողջ մրցակցություն,

-սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը,

-բախումային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել,

-ուսման ընթացքում և աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները,

-զերծ մնալ բարոյական չափանիշներին հակասող նախապաշարումներից և կանխակալ մոտեցումներից:

### **4. Ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակն է.**

Յուրաքանչյուր սովորող պետք է կարողանա՝

-ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները,

-դրսևորել ստեղծագործական երևակայություն,

-երևակայել, խորհել և ենթադրություններ անել ապագայի մասին,

-ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները:

### **5. Ինքնուրույն գործունեության կարողությունների և հմտությունների զարգացման նպատակն է.**

Ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող պետք է կարողանա՝

- անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները և ըստ այդմ ծավալել ուսումնական, աշխատանքային գործունեություն,
- գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորել,
- ճիշտ տնօրինել ժամանակը, մշակել և պահպանել աշխատանքի և հանգստի ժամակարգ /ռեժիմ/, վերահսկել սեփական վարքը,
- խնամել սեփական մարմինը, դրսևորել այն մարզելու կամք,
- զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ,
- կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները:

### **Արժեքային համակարգ**

Սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը: Նա պետք է՝

- հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,
- գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները և մասնագիտական վարպետությունը,
- կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,
- կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,
- գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,



-գիտակցի ծնողների, տարիքով մեծերի, փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

-հարգի մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

-անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,

-դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն,

-արժևորի և գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

-հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Սկսած 2000թ.-ից դպրոցն ակտիվորեն մասնակցել է միջազգային և հանրապետական կրթական ծրագրերին: Մինչև 2016 թվականը դպրոցում իրականացվել են 16 միջազգային և հանրապետական հանրակրթության տարբեր ոլորտներին վերաբերող ծրագրեր, որոնք հնարավորություն տվեցին դպրոցի նյութատեխնիկական բազան համապատասխանեցնել արդի կրթական պահանջներին: Դպրոցում բարձր մակարդակի վրա են գտնվում կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների աշխատանքները: Այսօր դպրոցի գլխավոր խնդիրը դպրոցի հիմնանորոգման աշխատանքներն են, թեև պետք է նշել, որ առանց այդ էլ դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցմամբ, խմելու և ոռոգման ջրով, իսկ դպրոցամերձ այգին և կանաչ տարածքները դարձել են երեխաների դաստիարակության կարևոր պայման: Մեկ աշակերտին բաժին է ընկնում 30 քառ.մ կանաչ տարածք:

## ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դպրոցի մանկավարժական և ծնողական խորհուրդների հետ համատեղ հարկավոր է դպրոցի շրջանավարտին դաստիարակել այնպես, որ նա ճանաչի իր հայրենիքը, լինի հայրենասեր, լիարժեք կերպով տիրապետի Հայաստանի Հանրապետության պետական լեզվին՝ հայերենին: Շրջանավարտը պետք է՝

-գիտակցի հայ ժողովրդի և հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, լինի ազգային լավագույն ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը,

-մտահոգվի ազգային և պետական խնդիրների լուծմամբ,

-ունենա պետական չափորոշյով սահմանված գիտելիքների համակարգ և ձեռք բերած գիտելիքները կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն,

-օժտված լինի ինքնուրույն մտածելակերպով, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությամբ,

-իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, լինի օրինապահ, ազնիվ մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող և հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,

-գիտակցի ընտանիք կազմելու անհրաժեշտությունը, պատրաստ լինի ընտանեկան կյանքին,

-կարողանա ճիշտ գնահատել իր կարողությունները,

-ունենա վստահություն սեփական ուժերի հանդեպ, ինքնակրթությամբ զբաղվելու կամք, ունակ լինի սովորելու ողջ կյանքի ընթացքում,

-պատրաստ լինի իր նախասիրություններին, հետաքրքրություններին և հակումներին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրելու, ինքնուրույն տնտեսություն վարելու:

Վերջին երեք տարիների ընթացքում դպրոցի շրջանավարտների շուրջ 20 %-ը սովորում է հանրապետության պետական և ոչ պետական բուհերում, 25%-ը՝ միջնակարգ մասնագիտական հաստատություններում: Մնացածը ընդգրկված են գյուղատնտեսական աշխատանքներում:

**ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՐԴԻ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԴՊՐՈՑԻ ՀԵՏ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ**

Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևյալ ուղղություններով.

-նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,

-դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

-կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

-դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:

**ԴՊՐՈՑԻ ՆՑՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Անվանումը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
1.ՈՒ.ս. մասնաշենքերի ընդհ. թիվը	1	1	1	1	1
2.ՈՒ.ս. կաբինետների թիվը	8	8	8	8	8
3. Դասասենյակների թիվը	4	4	4	4	4
3.11Հոգեբանի կաբինետ	1	1	1	1	1
3.2.Նախակրթարան /քմ/	51քմ	51քմ	51քմ	51քմ	51քմ
3.3.Գրադարան /քմ/ ընթերցարան	54+27	54+27	54+27	54+27	54+27
3.4.Հանդիսությունների դահլիճ/ տեղ/	200	200	200	200	200
3.5.Մարզադահլիճ/քմ/	1/ 200	1/200	1/200	1/200	1/200
3.6.Ճաշարան /քմ, տեղերի քանակը/	35/30	35/30	35/30	35/30	35/30
3.7.Մարզահրապարակ/ քմ/	5000	5000	5000	5000	5000

3.8.Աշխատանքի ուսուց. արհեստանոց	2/ 62+15	2/ 62+15	2/ 62+15	2/ 62+15	2/ 62+15
3.9 Դպրոցամերձ այգի /քմ/	3000	3000	3000	3000	3000
4.Տեխնիկական միջոցներ և սարքավ.	բավարար	բավարար	բավարար	բավարար	բավարար
4.1Անհատական համակարգիչներ	15	17	18	19	20
4.2.Հաստոցներ՝ մետաղամշ.,փայտամ.	3 4	3/4մ	3/4մ	3/4մ	3/4մ
4.3.Կարի մեքենաներ	4	4	4	5	6
4.5.Հեռուստացույց	5	5	5	5	5
4.6.Տեսամագնիտոֆոն	2	2	2	2	2
4.7.Թվ.ֆոտոխցիկ, տեսախցիկ	1	1	2	3	3
4.8.Պրոյեկտոր	1	1	1	2	2
4.9.DVD նվագարկիչ /փլեյեր/	2	2	2	2	2
4.10.Տեսախցիկ	1	1	1	1	1

## ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ՝ միջազգային և հանրապետական կրթական ծրագրեր իրագործելու համար:

### ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

### ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը ենթադրում է՝
  - սովորողների կրթության բովանդակային կառուցվածքի վերազինում,
  - դպրոցի դաստիարակչական համակարգի աշխատանքների կատարելագործում:

## Մանկավարժական համակազմի որակական բարելավում

-Կազմակերպման և ղեկավարման մեխանիզմների մշակում, որը պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը:

- Նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքի որակական բարելավումը:

-Մանակավարժներին աջակցել՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքների վերաբերյալ նյութեր:

-Շահագրգռել մանկավարժներին՝ կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:

Սպասվող արդյունքներ.

- ❖ Մանկավարժների մասնագիտական որակի մակարդակի բարձրացում,
- ❖ Մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության համակարգում,
- ❖ Մանկավարժների մեթոդական աշխատանքների պահանջարկի բարձրացում,
- ❖ Մանկավարժների մեթոդական մշակումների մրցունակության ապահովում,
- ❖ Մանկավարժների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում:

I. Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինման առումով իրականացնել հետևյալ խնդիրները.

1. Դպրոցի նորմատիվային ամրապնդում դաստիարակության ոլորտում, սովորողների ուսուցման ու զարգացման ապահովում դպրոցի կրթական ծրագրերի շրջանակում:
2. Սովորողների իրավունքների պահպանումը պետական կրթական չափանիշներին համապատասխան:
3. Մեթոդական և դիդակտիկ նյութերով ապահովում:

4. Սովորողներին շահագրգռել հետազոտական աշխատանքներ կատարելու՝ նրանց համար վարչարարական հետազոտությունների կազմակերպման և իրականացման նպաստավոր պայմանների ստեղծելով:

Ակնկալվող արդյունքները.

- ❖ Դպրոցի կրթական քաղաքականության նորմատիվային ամրակայում՝ հիմնարար կրթական ծրագրի ձևով,
- ❖ Ուսումնական պլանի համակարգված մեթոդական և դիդակտիկ ապահովվածություն,
- ❖ Մեթոդաբանական և դիդակտիկ նյութերի ընտրության ու մշակումների ուղղությամբ մանկավարժների միասնական մոտեցումների ապահովում,
- ❖ Սովորողների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում:

**II. Սովորողների կրթության կառուցվածքների և բովանդակությունների վերազինման առումով իրականացնել հետևյալ խնդիրները.**

1. Դպրոցի նորմատիվային ամրապնդումը դաստիարակության ոլորտում, սովորողների ուսուցման ու զարգացման ապահովումը դպրոցի կրթական ծրագրերի շրջանակում:
2. Սովորողների իրավունքների պահպանումը պետական կրթական չափանիշներին համապատասխան:
3. Մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովում:

## *Հայրենասիրական դաստիարակություն*

Դպրոցում ստեղծել պետական խորհրդանիշների հանրահռչակման և քաղաքացիական դաստիարակության ծրագիր:

Հանուն ազգային հոգևոր-մշակութային արժեքների վերարտադրման՝ պետական խորհրդանիշների (Հայաստանի Հանրապետության զինանշան, ՀՀ դրոշ, ՀՀ օրհներգ), ազգային ինքնության և անկախության բաղկացուցիչների (հայոց լեզու, ընտանիք, Հայաստանյազ առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՀ անկախության մասին հռչակագիր, ՀՀ Սահմանադրություն, ՀՀ Նախագահ, ՀՀ Ազգային Ժողով, Հայոց բանակ, գործադիր և դատական մարմիններ, մայրաքաղաք, ազգային դրամ) բովանդակության նպատակային պահպանումը և տարածումը.

Ազգային պետական խորհրդանիշների հանրահռչակման միջոցով նպաստել հայության ինքնության ամրապնդմանը, սեփական ազգի պատմության և պետության կայացման գործում մասնակցելու հնարավորության ստեղծմանը.

Պետականության և նրա բաղկացուցիչների նկատմամբ դպրոցում հարգանքի ու ակնածանքի արմատավորումը, քաղաքացիական վարքի մշակույթի ձևավորումը, հասարակական, պետական շահերի գերակայության հաստատումը անձնական շահի նկատմամբ: Դպրոցի մանկավարժական կոլեկտիվը մեծ ուշադրություն է դարձնում սովորողների հայրենասիրական դաստիարակությանը: Ավանդույթ է դարձել ՀՀ բոլոր պետական տոները, առաջին և վերջին զանգերի արարողությունները գյուղի զոհված ազատամարտիկների հուշարձանի մոտ նշելը: Յուրաքանչյուր երկուշաբթի դպրոցի դասերն սկսվում են ՀՀ օրհներգով: Դպրոցում ձևավորվել է ՀՀ խորհրդանիշներին նվիրված սրահ:

**ԴՊՐՈՑԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ և ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ**

Դպրոցում արմատապես բարելավել ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և նրանց ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում: Ծնողական խորհրդին վերապահել նաև հետևյալ լիազորությունները՝

- ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում,
- ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում,
- արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին մասնակցություն,
- ծնողական և աշակերտական խորհուրդների ,դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ կապի ամրապնդում՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը,
- ծնողական խորհուրդների աշխատանքների կազմակերպմանը աջակցություն, հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բնագավառում: Այդ նպատակով ճշտել՝
- դպրոց հաճախող այն աշակերտների թիվը, որոնք օգտվում են <<Փարոս>> ծրագրից՝ 35
- միակողմանի ծնողագուրկ աշակերտների թիվը՝ 6
- հաշմանդամ աշակերտների վերաբերյալ տեղեկատվությունը 2
- նյութապես անապահով սովորողների թիվը՝ 24
- միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների թիվը՝ 9
- աշակերտների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում՝ 15
- եզդի երեխաների թիվը՝ 25:



Վերլուծության հիման վրա առանձին կառույցների և դրանց ներկայացուցիչների միջոցով բարելավել աշակերտների սոցիալական պայմանները:

Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում:

Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ՝ աշակերտական ինքնավարության միջոցով:

- Ինքնավարությունը պետք է արտահայտվի աշակերտների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտմամբ:
- Դպրոցում գործող ծնողական և աշակերտական խորհուրդների ամենամսյա նիստերում դպրոցի առջև կանգնած խնդիրների վերլուծում և համապատասխան որոշումներ կայացում:
- Աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունների ամրապնդում:
- Ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը:
- Աշակերտական ինքնավարության միջոցով աշակերտների կրթությանը և ինքնակրթությանը ապահովում՝ նպաստել նրանց համակողմանի զարգացումը:

## **ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ**

### **ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

<<Հանրակրթության մասին>> օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական.

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանն անհրաժեշտաբար մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը: 2016 թվականի ապրիլին տնօրենի հրամանով դպրոցի նկատմամբ շահագրգիռ ոլոր կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծվել է հանձնաժողով դպրոցի 2015-16 ուստարվա ներքին գնահատումն անցկացնելու համար

## ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ և ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ

Մշտապես կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում ինչպես մանկավարժական բուհերում, այնպես էլ ՀՀ Կրթության և գիտության նախարարության ենթակա կառույցներում: Վերապատրաստումն իրականացնել երկու ուղղությամբ՝ մշտական վերապատրաստում, որը նպատակաուղղված կլինի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների կատարելագործմանը, և հերթական վերապատրաստում, որը պետք է օժանդակի ուսուցչի ատեստավորման գործընթացի դժվարությունների հաղթահարմանը: Դպրոցի մանկավարժական կազմին մշտապես տրամադրել ներոդական, մասնագիտական գրականություն՝ ուսումնական առարկաների դասավանդմանն ուղղված մեթոդական ցուցումներով և հրահանգներով: Ուսումնասիրել վերապատրաստում անցած ուսուցիչների մանկավարժական աշխատանքային արդյունավետությունը: Մշտապես վերլուծել դպրոցի մանկավարժական որակական կազմը:

2016 թվականից շարունակել ուսուցիչների ատեստավորման գործընթացը՝ յուրաքանչյուր տարի ատեստավորելով մանկավարժների 1/5 մասը:

Այդ թվում																
	Ուսուցիչների ընդհանուր	Բարձրագույն կրթություն ունեցողներ	Միջին մասնագիտական կրթություն ունեցողներ	Մանկավարժական կրթություն ունեցողներ	Ոչ մասնագիտական կրթություն ունեցողներ	Վերապատրաստվել են	Վերապատրաստված չեն	Մեկ դրույթով աշխատող մանկավարժների թիվը	Մեկ դրույթից պակաս դասաժամեր ունեցողների թիվը	Համատեղությամբ աշխատող մանկավարժների թիվը	Մինչև 5 տարվա ստաժ մանկավարժական	5-10 տարվա ստաժ մանկավարժական	10-20 տարվա ստաժ մանկավարժական	2 –ից բարձր մանկավարժական ստաժ ունեցողների թիվը	Հեռակա կարգով սովորող ուսուցիչների թիվը	
2016-17	26	21	5	27	3	24	2	7	21	1	5	5	7	11	3	
2017-18	26	25	1	27	3	24	1	7	21	1	5	9	6	12	-	
2018-19	26	25	1	27	3	25	1	7	21	1	4	8	7	12	-	
2019-20	26	25	1	27	3	26	1	7	21	1	4	8	3	16	-	
2020-21	26	25	1	27	3	26	1	7	21	1	-	9	3	16	-	

# ԴՊՐՈՑԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ձեռնարկատիրական գործունեությունը դպրոցի համար լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր է: Ստացված շահույթն անհրաժեշտ է օգտագործել դպրոցի կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով:

## *ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ*

Դպրոցում ստեղծել իրավաբանական-տեղեկատվական գրադարան և այն ապահովել իրավական ակտերով.

1. <<Կրթության մասին>> ՀՀ օրենքը,
2. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքը,
3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքը,
4. <<Պետական ոչ աենտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքը,
5. <<Երեխայի իրավունքի մասին>> ՀՀ օրենքը,
6. <<Երեխայի իրավունքի մասին>> կոնվենցիան,
7. <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ՀՀ օրենքը,
8. << Կրթության պետական տեսչության մասին ՀՀ օրենքը
9. <<Լեզվի մասին>>ՀՀ օրենքը
10. Նախնական(Արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին ՀՀ Օրենքը,
- 11.Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքը: